Արձանագրություն N 2

«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4 **«01» «12» 2022 թ**
ժ.16:00

Նիստին ներկա էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Շահբազյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Անատոլի Տոկարև(ԳՊ/ԳԱ),
Արսեն Ենգիբարյան (ԳՊ/ԳԱ) , Անահիտ Ավետիսյան (ԳՊ/ԲԱ), Արմինե Հարությունյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Ներսիսյան

1. Տեղեկություններ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Ա.Շահբազյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:
2022թ-ի դեկտեմբերի 01-ից մինչև 07-ը , «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ -ում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում, տեղի ունեցավ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

1	«ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ	ՀՎՀՀ 01242168 էլ. Փոստ tag-chemlab@mail.ru

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Շահբազյան)

2.1 Հրավերով սահմանված՝ «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

1. Կազմակերպության կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ում տեխնիկական բնութագիրը չէր համապատասխանում գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրին:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 05.12.2022թ. հանձնարարել ընթացակարգի քարտուղարին անհամապատասխանության շտկման ծանուցում ուղարկել «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ –ին, ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:
2.3 «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպության հայտը գնահատվել է բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա.Շահբազյան)

Չափաբաժին	Անվանումը	նախահաշվային գին	«ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ	
			Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով

1	Քլորոֆորմ	120000	100000	100000
2	Էլեկտրոնային ջերմաչափ-խոնավաչափ	144000	96000	96000
3	Նրբաթիթեղներ/ քրոմատոգրաֆիայի համար՝ Սիլուֆոլ	350000		

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

- Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.2 Հանձնաժողովը որոշեց «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հրավերի պահանջների համապատասխանող:

- Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.3 Հանձնաժողովը որոշեց « ՍՉԱՄ- ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ-ին :

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Շահբազյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.3-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«ՔԻՄԼԱԲ» ՍՊԸ-ին :**

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

5.Տեղեկություն ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակի չկայացած հայտարարելու մասին

(Ա.Շահբազյան)

5.1 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, հայտեր չներկայացնելու հիմքով և հաստատել ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-22/15 ծածկագրով գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

Հանձնաժողովի		
Անդամներ՝		Ա.Շահբազյան
		Ա.Տոկարև
		Ա.Ենգիբարյան
		Ա.Ավետիսյան
		Ա.Հարությունյան
Քարտուղար՝		Ա.Ներսիսյան